պաշտօնեաների ընտրութիւնը յանձնւում է գործակալական շրջանների ամբողջ հոգևորականութեան, որին անպատճառ պէտք է մասնակցեն և ծխականները. թեկնածուների ցանկը մատուցւում է քահանայից խորհրդին ի զննութիւն. ընտրեալին հաստատում է եպիսկոպոսը: 4) Գործակալական շրջաններում վարչական և դատաստանական իշխանութեան իրաւունքը տալ հոգևորականութեան և ծխականների ներկայացուցիչների կողմից 3 տարով ընտրուած խորհուրդներին: Գործակալական խորհրդի որոշումների դէմ եղած բողոքները քննւում են եպիսկոպոսի և քահանաների խորհրդի կողմից. 5) վերակազմել եկեղեցական դատարանը կանոնական հիմունքների և քաղաքացիական դատարանի սկզբունքների համաձայն և մտցնել պատուի եղբայրական դատարան. 6) ընդունել, որ եկեղեցական կառավարութիւնը ոչ թէ ճնշող կամ իշխող իշխանութեան բնաւորութիւնը պէտք է կրի, այլ հովուական. (Մատթէոս գլ Ի. 25—27. Պետրոս Ե. 2—3. Գործք Առաք. Ի. 28—31. և այլն). 7) քահանային ծխից հեռացնել մի միայն քահանայից խորհրդի և եպիսկոպոսի դատաստանով. 8) թոյլատրել, որ հոգևոր կոչումը թողնեն առանց քաղաքացիական այն իրաւունքներից զրկուելու, որոնք ձեռք են բերուած ծագմամբ և կրթութեամբ. 9) թոյլատրել այրի քահանաների կրկնամուսնութիւնը. 10) թոյլատրել քահանաներին, որ իրաւունք ունենան մասնակցելու ինքնավարական ժողովրդական բոլոր հիմնարկութեանց մէջ և վերացնել անբարոյականացնող շքանշանները»:

Նոյնպիսի հետաքրքրական որոշումներ է ընդունուած նաև հոգևոր դպրոցների և Պետական դումայի վերաբերութեամբ: —Իսկ մե՞նք, դեռ քնած ենք:

ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Նոյեմբերի 9 ին ֆրանսիական Սենատում ոկսուեց եկեղեցին պետութիւնից բաժանելու օրինագծի քննութիւնը, որն անցեալ յուլիս ամսին ընդունուեց պալատի կողմից: Որպէս զի գործը չը ձգձգուի և ներկայ յունվարին խնդիրը վերջնականապէս լուծուի, որոշուեց առանձին սրբագրութիւններ չը մտցնել օրինագծի մէջ, մինչդեռ պահպանողականներն 96 կէտում սրբագրութիւններ են արել և այդ մի միայն ժամանակ վատնելու մինչև նոր ընտրութիւնները: Օրինագծի հակառակորդներն առաջարկում էին պահպանել կոնկորդատը (պապի

հետ կրած դաշնագիրը), որպէս խաղաղութեան մի զէնք, որը թէ եկեղեցուն է օգտակար և թէ պետութեան, դատապարտում էին օրինագծի հակակրօնական ոգին, նրա անարդարացիութիւնը, բաժանման պայմանների խստութիւնը և սպառնում էին սկսուած կրօնական կռուի ծանր հետևանքներով: Օրինագծի պաշտպանները պնդում էին, որ կոնկորդատը վաղուց դադարել է խաղաղութեան զէնք լինելուց և հոգևորականութիւնը նրանով օգտւում էր մի միայն իւր նպատակների համար, որոնք միանգամայն թշնամական էին հասարակապետութեան. որ եկեղեցու և հասարակապետութեան կեանքը միասին անտանելի դարձաւ և անջատումը դատուեց անհրաժեշտ: Նրանց կարծիքով անջատումը ի նկատի է առնում եկեղեցու արդարացի շահերը և ցանկանում է ապահովել բոլորի խղճի ազատութիւնը: Նոյեմբերի 18-ին ընդհանուր խորհրդաժողովը վերջացաւ և նախագահ նախարարի առաջարկով քուէարկութեամբ 173 ձայնով 107-ի դէմ՝ որոշուեց օրինագծի «անյետաձգելիութիւնը»: Այնուհետև սկսուեց օրինագծի քննութիւնը յօդուած առ յօդուած: Մինչև Նոյեմբերի 26-ը առանց փոփոխութեան ընդունուեցին 7 յօդուածներ:

Արդէն հաշուած է, թէ ինչ հետևանք կունենայ եկեղեցու անջատումը հասարակապետութեան բիւջէի վրայ:

Առաջին տարի հարկաւոր կլինի ներկայ հոգևոր պաշտօնեաների կենսաթոշակների համար 11,129,445 ֆրանկ. և ժամանակաւոր նպաստների համար, որոնք ծառայութեան կենսաթոշակի ժամանակամիջոցը չեն լրացրել՝ 18,379,950 ֆրանկ. ընդամենը 29,563,871 ֆրանկ: Որովհետև կոնկորդատի համաձայն կազմած ներկայ նախահաշուով հոգևոր պաշտօնեաների ռոճիկը 1906 թուի համար նշանակուած է 37,441,800 ֆրանկ, ուստի անջատման օրէնքը գործադրելուց յետոյ պետական գանձարանը խնայողութիւն կունենայ 7,900,000 ֆրանկ, իսկ եթէ դրան աւելացնենք նաև հոգևոր հաստատութեան կառավարութեան ծախսուց մնացորդը, այդ դէպքում նա կը հասնի 8,280,000 ֆրանկի: Ութ տարի անցնելուց յետոյ, երբ ժամանակաւոր օժանդակութիւնները բոլորովին կը դադարեն, իսկ կենսաթոշակաւորների թիւը կը քչանայ, ծախսերի գումարը կլինի մի միայն 7,988,515 ֆրանկ, իսկ քսան տարուց յետոյ նրանք 399,426 ֆրանկից աւելի չեն լինի: Այդպիսով աշխատաւոր դասակարգերի ուսերից կը վերցուի 37,042,374 ֆրանկ ծախսը: